Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, ազգանուն(ներ)ը

Արևիկ Անափիոսյան

2. Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ստրասբուրգ, Ֆրանսիա

Մարտի 19-22

4. Հրավիրող կողմը

Եվրոպայի Խորհուրդ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի 10-րդ պլենար նիստի աշխատանքներին և Եվրոպայի խորհրդի և

Եվրոպական միության հետ համագործակցությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպվող «Կրթություն 2030»-ին նվիրված առաջին և երկրորդ տարածաշրջանային խմբերի երկրների խորհրդակցությանը մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները.

Հանդիպման ժամանակ մի շարք թեմաներ, որոնցից են հմտություններ ժողովրդավարական մշակույթի համար, կրթության ոլորտում ներառական մոտեցումները, համագործակցության և կարողությունների զարգացման նոր նախաձեռնությունները, համագործակցությունը UNESCO-ի հետ կայուն զարգացման նպատակ 4-ի շրջանակում և այլն: Հանդիպման օրակարգի հարցերից էր նաև խորհրդի նախագահի, տեղակալի և բյուրոյի անդամի ընտրության հարցերը: Կոմիտեի անդամ 50 պետությունից միայն չորսն են պատվիրակների ներկայացմամբ ընտրվում բյուրոյի անդամ, որոնց թվում այս անգամ ընդգրկվել է նաև Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպման ընթացքում ելույթ ունեցավ Եվրոպայի խորհրդի ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության ղեկավար Սնեժանա Մարկովիչ- Սամարջիչը, ներկայացնելով այն քաղաքական համատեքստը, որում Եվրոպայի Խորհրդի կրթական ծրագրերը իրականացվում են: Տիկին Մարկովիչը կարևորել է կրթության դերը կայուն ժողովրդավարական հասարակություններ ստեղծելու գործում, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության ապահովման հարցում:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Ակադեմիական փոխճանաչման և

շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը ընդգրկված է «Փախստականների համար որակավորումների անձնագիր» Եվրախորհրդի ծրագրում և որի շրջանակներում մշակվել է փախստականների որակումների ճանաչման մեթոդաբանությունը, Տիկին Մարկովիչի հետ ունեցած հանդիպման ժամանակ առաջարկվել է Հայաստանի կենտրոնը դիտարկել որպես տարածաշրջանային կառույց:

Առաջարկը՝ որակավորումների ճանաչման համար փորձագիտական ներուժ տրամադրելու առումով, ստացել է դրական արձագանք ինչպես տիկին Մարկովիչի, այնպես էլ խորհրդի անդամների կողմից:

Հանդիպման օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ տեղի ունեցած մտքերի փոխանակման ընթացքում քննարկվել են ժողովրդավարական մշակույթի հմտություններին վերաբերող հարցեր, այդ թվում թվային քաղաքացիական կրթությունը, որի վերաբերյալ խորհուրդը հավանություն տվեց ուղեցույցին և ծնողների համար պատրաստված թռուցիկներին, ինչպես նաև կարևորեց այս ոլորտում մասնավոր և պետական հաստատությունների համագործակցության խթանմանն ուղված ուղենիշերի մշակումը: Որոշվեց հանձնարարել բոլորին ուսումնասիրել այն մոտեցումները, որոնցով կարելի է խթանել այդ համագործակցությունը: Այս թեմայի շուրջ քննարկում է տեղի ունեցել Մոլդովայի ներկայացուցչի հետ և ձեռք է բերվել պայմանավորվածություն, որի շրջանակում ժողովրդավարական կրթության փորձագետ կգործուղվի Հայաստան՝ ներգրավվելու նախաձեռնված հանրակրթական չափորոշիչների և առարկայական ծրագրերի վերանայման ուղղությամբ կատարվող աշխատանքներին: Տեղի է ունեցել նաև հանդիպում Պորտուգալիայի ներկայացուցչի հետ, ում հետ քննարկվել է դպրոցների կառավարման համակարգին առնչվող հարցեր և համագործակցության հնարավորություններ:

Լեզվական քաղաքականությունն ու պրակտիկան կրթական ծրագրերի վերաբերյալ խորհուրդը վերահաստատեց իր կարծիքը այն մասին, որ միջկառավարական

աշխատանքը կրթության քաղաքականության շուրջ պետք է ներառի լեզվին վերաբերող ուղղություն:

Բարձրագույն կրթության ժողովրդավարական առաքելությունը վերաբերող հարցերի քննարկումից հետո խորհուրդը կարևորեց բարձրագույն կրթության դերի շարունակական բարձրացումը ժողովրդավարական մշակույթի ձևավորման գործում: Կրթության ներառական մոտեցումների վերաբերյալ քննարկվել են փախստականների, միգրանտների և խոցելի խմբերի համար կրթության մատուցման ապահովմանն առնչվող հարցեր:

Նիստի օրակարգային հարցերից էր նաև ETINED հարթակին վերաբերող հարցերի քննարկումը, ինչի շրջանակում առաջարկվել է դիտարկել Հայաստանում ծրագրի շարունակության հնարավորությունը:

8. Ստորագրությունը, ամսաթիվը

27.03.2019թ.